Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
փետրվարի 12-ի N 125 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են առևտրի իրականացման վայրերի տեղեկատվական տվյալների շտեմարանին Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի հասանելիության կանոնները։

2. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է ապահովել հարկային մարմնի հասանելիությունը տեղեկատվական տվյալների շտեմարանին։

3. Առևտրի իրականացման վայրերում տեղադրված ցանցային հսկիչ-դրամարկղային մեքենաներից GPRS հանգույցի կամ այլ սարքի միջոցով ֆիսկալային տվյալներն ուղարկվում են գլխավոր սերվեր՝ օգտագործելով HTTPS, FTP պրոտոկոլներով։

Այն առևտրի իրականացման վայրերում, որտեղ հսկիչ-դրամարկղային մեքենաները միանում են լոկալ համակարգչային ցանցով (մալուխային կապի միջոցով) և միացված են առևտրի իրականացման վայրում տեղադրված համակարգչին, յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում ֆիսկալային տվյալներն ուղարկվում են այդ համակարգիչ, որն իր հերթին նշված տվյալներն ուղարկում է գլխավոր սերվեր։ Նշված տվյալների տեղափոխումը պետք է իրականացվի ավտոմատացված եղանակով (համապատասխան ծրագրի միջոցով)։

Առևտրի իրականացման վայրում տեղադրված համակարգչից ֆիսկալային տվյալները տեղափոխվում են գլխավոր սերվեր՝ ինտերնետ կապի միջոցով։

4. Հսկիչ-դրամարկղային մեքենաներից դեպի գլխավոր սերվեր ուղարկվող ֆիսկալային տվյալներն են՝

1) ԷՀԺ (էլեկտրոնային հսկիչ ժապավեն)՝ կարճ հաշվետվություն բոլոր գործարքների վերաբերյալ մեկ կամ ավելի հերթափոխի կամ 24 ժամվա ընթացքում.

2) հերթափոխային հաշվետվություն՝ ընդհանուր հաշվետվություն հերթափոխի (հերթափոխների) կամ 24 ժամվա ընթացքում։

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված տվյալները յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա սկիզբն ուղարկվում են գլխավոր սերվեր։

6. Գլխավոր սերվերն իրենից ներկայացնում է՝

1) ինֆորմացիայի կոլեկտոր, որը նախատեսված է հսկիչ-դրամարկղային մեքենաներից տվյալների հավաքագրման համար.

2) տվյալների շտեմարան, որը նախատեսված է ստացված տվյալների պահպանման համար.

3) տվյալների մշակման և հաշվետվությունների կազմման հանգույց, որը նախատեսված է ստացված տվյալների հիման վրա հաշվետվություններ կազմելու համար։

7. Գլխավոր սերվեր մուտք եղած տեղեկատվությունը ծրագրային փաթեթի միջոցով ենթարկվում է մշակման և այդ մշակման արդյունքում ստեղծվում են հաշվետվություններ՝ նախօրոք հաստատված ձևերին համապատասխան։ Նշված հաշվետվությունների ձևերը, ինչպես նաև տվյալների շտեմարանից օգտվելու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ.
ՍԱՐԳՍՅԱՆ